# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

24 **հունիսի** 2020 **թվական**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/5
## ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 5-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 47 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, առևտրի և սպասարկումների, սոցիալական ապահովության, կազմակերպական, իրավաբանական վարչությունների պետերը. քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետը և «Երևաննախագիծ» ՓԲ ընկերության տնօրենը:

Նախքան օրակարգին անդրադառնալը, ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամներ՝ Էդուարդ Ավետիսյանը և Գրիգորի Երիցյանը:

Էդուարդ Ավետիսյանը տեղեկացրեց, որ 2020 թվականի հունիսի 24-ի նիստի օրակարգի նախագծի 19-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից չի ներկայացվել պետական փորձագիտական եզրակացությունը, ուստի՝ հարցը հանում է օրակարգի նախագծից:

Գրիգորի Երիցյանը տեղեկացրեց, որ 2020 թվականի հունիսի 24-ի նիստի օրակարգի նախագծի 19-րդ՝ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N178-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից չի ներկայացվել պետական փորձագիտական եզրակացությունը, ուստի՝ հարցը հանում է օրակարգի նախագծից:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի նիստի օրակարգի 2-րդ՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2019 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» հարցը տեղափոխվում է օրակարգի 20-րդ կետ:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին:
3. Շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանման համար վճարների չափը սահմանելու մասին:
4. Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին:
5. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
6. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
7. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
8. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
9. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
10. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:
11. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
12. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:
13. Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին:
14. Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին:
15. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N45-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
16. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N182-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
17. 2020 թվականի տեղական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին:
18. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին:
19. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
20. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2019 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 47 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1.Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

3. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

4. Թեհմինա Վարդանյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Հարությունյանը և քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հ. Սաֆարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Լուսինե Գևորգյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

4. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

«Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Սահմանել Երևան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, ժամկետները, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 43 անդամ
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

3. **ԼՍԵՑԻՆ -** Շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանման համար վճարների չափը սահմանելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ -** Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1.Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

4. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության պետ Հ. Սաֆարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանման համար վճարների չափը սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ -** Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Անահիտ Ասատրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ –** 1. Սահմանել շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանման համար վճարների չափը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 41 անդամ
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

4. **ԼՍԵՑԻՆ -** Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – «Երևաննախագիծ» ՓԲ ընկերության տնօրեն Սուրեն Օհանյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ -** Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

ՈՐՈՇՎԵՑ – 1.Հաստատել Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 44 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝35, դեմ՝3, ձեռնպահ՝6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.10-ին:

5. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Գայանե Մելքոմ Մելքոմյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Դավիթ Բեկի փողոցի հ.223/3 հասցեի և Նորքի այգիներ փողոցի հ.252 հասցեների հարևանությամբ գտնվող 20.0-ական քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «բնակավայրերի» կատեգորիայի հողերից փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝40, դեմ՝0, ձեռնպահ՝1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի մի շարք հասցեներում գտնվող թվով 10 պոմպակայանների զբաղեցրած հողամասերի նպատակային նշանակությունները «բնակավայրերի» կատեգորիայի հողերից փոխադրել «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիա՝ համաձայն կից հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 39 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

7. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Օվսաննա Հովսեփյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի Շիրազի փողոցի ձախ մասում Գ-1 թաղամասից դեպի Սիլիկյան թաղամաս տանող հատվածում գտնվող Նաիրա Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 549.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 39 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

8. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Գայանե Մելքոմ Մելքոմյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ներքին Չարբախ հ.199/5 և հ.214 հասցեներում գտնվող, համապատասխանաբար 1900.0քմ և 1800.0քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «գյուղատնտեսական» հողերի կատեգորիայից փոխադրել «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝36, դեմ՝0, ձեռնպահ՝5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

9. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն: Միաժամանակ, հանձնաժողովի կողմից առաջարկվել է բացի անհրաժեշտ ՇՄԱ գնահատականից, իրականացնել նաև իրազեկում և հասարակության հետ քննարկումներ՝ առաջնորդվելով «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգի մասին» ՀՀ կառավարության 28 հոկտեմբերի 1998 թվականի N660 որոշումով:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հանձնաժողովի նախագահ Ա. Կարապետյանը:

«Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սեդոյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1.Լուսինե Գևորգյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Գայանե Մելքոմ Մելքոմյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3.Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Երևան քաղաքի Շահումյան 4-րդ փողոցի հ.73 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով «Կլասիկ Սերվիս» ՍՊԸ-ին պատկանող 1.191հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 38 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝34, դեմ՝1, ձեռնպահ՝3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

10. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Մեսրոպ Պապիկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Նուարդ Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Խաչատրյանը և քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սեդոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն: Միաժամանակ, հանձնաժողովը սույն որոշման նախագծի վերաբերյալ արտահայտել է հատուկ կարծիք: Ուսումնասիրելով որոշման նախագծի փաթեթում ներկայացված կառուցապատման էսքիզային նախագիծը և ՃՀԱ նախնական տարբերակը, հանձնաժողովը գտնում է, որ նախատեսվող կառուցապատման խտությունը և հարկայնությունը համաչափ չեն քննարկվող թաղամասի ձևավորված քաղաքաշինական միջավայրին: Առաջարկվել է

քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությանը վերանայել ճՀԱ՝ նվազեցնելով հարկայնությունն ու խտությունը: Նաև, բացի անհրաժեշտ ՇՄԱ գնահատականից, առաջարկվում է իրականացնել իրազեկում և հասարակության հետ քննարկումներ՝ առաջնորդվելով «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգի մասին» ՀՀ կառավարության 28 հոկտեմբերի 1998 թվականի N660 որոշումով:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ –** 1. Երևան քաղաքի Վրացական փողոցի հ.հ.16/3 հասցեում «ՄԻԼՀԱՈՒՍ ՅՈՒ» ՍՊԸ-ին սեփականության և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար 0.325565հա և 0.0162հա, Վրացական փողոցի հ.16/4 հասցեում «ՀՈՄՈ ԹՌԵՅԴԻՆԳ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.012հա, Վրացական փողոցի հ.16/5 հասցեում «ՄՈՄՇԻՆ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ին սեփականության, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0.230073հա, 0.0162հա և Վրացական փողոցի հ.16/6 հասցեում Ստեփան Ախոյանին սեփականության իրավունքով պատկանող 0.3879հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 37 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 20, դեմ՝ 11, ձեռնպահ՝ 6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

11. **ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գարեգին Խաչատրյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Նուարդ Վարդանյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Մեսրոպ Պապիկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հանձնաժողովի նախագահ Արսեն Կարապետյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հանձնաժողովի նախագահ Ա. Կարապետյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Մեսրոպ Պապիկյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խաչատրյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1. Համաձայնություն տալ՝ Աշոտ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան, Աջափնյակ վարչական շրջանի, Նազարբեկյան թաղամասի հ.հ.43/30 և 43/11 հասցեներում, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող համապատասխանաբար 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 07.08.2019թ. հ.07082019-01-0155 և 17.01.2020թ. հ.17012020-01-0189 վկայականներ) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Գ-1 թաղամասի հ.1/13 և Սիլիկյան 5-րդ փողոցի հ.70/5 հասցեների հարևանությամբ, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող համապատասխանաբար 1000.0քմ և 1001.5քմ մակերեսներով հողամասերի հետ փոխանակելուն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 37 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝29, դեմ՝2, ձեռնպահ՝6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 105-րդ կետով, Երևան քաղաքի ավագանին որոշեց, երկարաձգել նիստի տևողությունը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 34 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝29, դեմ՝5, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 17.30-ին:

12. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Լուսինե Հովհաննիսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Պավել Սարգսյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Լ. Հովհաննիսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Գայանե Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Լ. Հովհաննիսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N46-Ն որոշման հավելվածի (այսուհետև՝ Հավելված) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Երևանում տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, հանրության մասնակցությունն ու իրազեկումը, ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը, ինչպես նաև համայնքի բնակիչներին սոցիալական աջակցության տրամադրումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետին կից ստեղծվում և գործում են խորհրդակցական մարմիններ (այսուհետ՝ Խորհուրդ):»:

2. Հավելվածի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին ենթակետով.

«7.1) սոցիալական աջակցության տրամադրման,»:

3. Հավելվածի 6-րդ կետում «ժամկետով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն կարգի 6.1-րդ կետով նախատեսված դեպքի» բառերը:

4. Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6.1-րդ և 6.2-րդ կետերով.

«6.1. Սույն կարգի 4-րդ կետի 7.1-ին ենթակետում նշված խորհրդի անդամներին իր որոշմամբ 1 տարի ժամկետով նշանակում է Երևանի քաղաքապետը, իսկ խորհրդի կազմավորման և գործունեության կարգը, լիազորությունները սահմանում է Երևան քաղաքի ավագանին՝ ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով:

6.2. Սույն կարգը կիրառելի է սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն կարգի 6.1-րդ կետում նշված որոշումներով:»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

13. ԼՍԵՑԻՆ - Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Լուսինե Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

14. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետ Լուսինե Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ավագանու հաստատմանը ներկայացնել սույն որոշումից բխող՝ Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ավագանու որոշման նախագիծը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

15. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N45-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի N45-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը հաստատելու մասին» N1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 114-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտարարեց երեսուն րոպե ընդմիջում:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 19.10-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» N45-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման հավելվածի «Սպորտ, Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ, Մշակույթ, Երեխաների իրավունքների պաշտպանություն» բաժնի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Սպորտ, Երիտասարդության հարցեր, Մշակույթ, Երեխաների իրավունքների պաշտպանություն»:

2) «Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ» ենթաբաժնի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Երիտասարդության հարցեր»:

3) «Երիտասարդության հարցեր» ենթաբաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Երևան համայնքը նպատակ ունի բարձրացնել համայնքում բնակվող երիտասարդների հասարակական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային մասնակցության մակարդակը, ինչպես նաև մշակել և իրականացնել Երևան համայնքի երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր:

Երիտասարդները Երևան համայնքի առավել դինամիկ հատվածն են և անհրաժեշտ է երիտասարդներին ներգրավել համայնքի կառավարման գործընթացում և նրանց մասնակից դարձնել քաղաքի ամենատարբեր խնդիրների լուծմանը՝ օգտագործելով երիտասարդների ստեղծարար և նորարարական գաղափարները հանուն համայնքի զարգացման:

Երևան համայնքը նախատեսում է մշակել և իրականացնել Երևան համայնքի տեղական երիտասարդական քաղաքականությունը, որը համակողմանի կարձագանքի համայնքի երիտասարդների կարիքներին:

Երևան համայնքի երիտասարդներին վերաբերող հարցերի շրջանակը ավելի լայն է, քան կրթությունը, զբաղվածությունը կամ առողջապահությունը, հետևաբար Երևան համայնքի երկարաժամկետ նպատակն է՝ իր երիտասարդական քաղաքականությունը մշակել և իրականացնել հնարավորինս ներառական և համակողմանի:

Հիմնախնդիրներ՝

1.Մայրաքաղաքի երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:

2. Երիտասարդների աշխատանքային իրավունքների պաշտպանության ուղղությամբ արհմիությունների հետ համագործակցության հաստատման անհրաժեշտություն:

3. Համայնքային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի աջակցման ու խրախուսման, ինչպես նաև երիտասարդական կազմակերպություններին և երիտասարդական նախաձեռնություններին համայնքի կառավարման գործընթացին մասնակցության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտություն:

4.Մայրաքաղաքում երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի խրախուսման և համայնքում կամավորական մշակույթի խթանման անհրաժեշտություն:

5. Երևան համայնքի երիտասարդական քաղաքականության մշակման անհրաժեշտություն:

6. Տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, երիտասարդության ոլորտում Երևան համայնքի իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման և վերջիններիս իրականացման համար հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու անհրաժեշտություն:

7.Երևան համայնքի և հասարակական ու պետական կառույցների համագործակության արդյունքում Երևանում երիտասարդական և մշակութային համայնքային կենտրոնների ստեղծման կամ առկա մշակութային կենտրոնների վերափոխման անհրաժեշտություն:

8.Երևանի համայնքի երիտասարդների շրջանում իրենց կյանքի տարբեր ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման անհրաժեշտություն:

2019-2023թթ . նախատեսվող աշխատանքներ

1. Երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում, այդ թվում՝ աշխատանքային տոնավաճառներ, Երևանի քաղաքապետարանում և դրա ենթակայության տակ գտնվող կառույցներում աշխատանքային պրակտիկաների հնարավորությունների ստեղծում, զբաղվածության

տարածքային կենտրոնների հետ համագործակցություն, ՀԿ-ների հետ համագործակցությամբ երիտասարդների աշխատանք գտնելու, հմտությունների և կարողությունների զարգացման ուղղությամբ համատեղ ծրագրերի մշակում:

2. Արհմիությունների հետ համագործակցության հաստատում և երիտասարդների աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված համատեղ ծրագրերի մշակում և իրականացում:

3. Երևան համայնքի խնդիրների լուծմանը միտված երիտասարդական կազմակերպությունների և երիտասարդների նորարարական ծրագրերի և գաղափարների խրախուսում և ֆինանսավորում:

4. Երիտասարդների ներգրավում քաղաքապետարանի և իր ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին և միջոցառումներին՝ որպես կամավորներ:

5. Երևան համայնքի երիտասարդական քաղաքականության 5-ամյա ռազմավարության և դրա իրականացմանն ուղղված ճանապարհային քարտեզի և գործողությունների պլանի մշակում, որում մանրամասն կներկայացվեն համայնքի կողմից երիտասարդների հետ իրականացվող ծրագրերը:

6. Տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության խորացում, համատեղ ծրագրերի մշակում և իրականացում, երիտասարդության ոլորտում համայնքի կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացում և դրանց իրականացման համար հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավում:

7. Երևանում համայնքային երիտասարդական և մշակութային կենտրոնների հիմնադրման և վերափոխման ուղությամբ միջոցառումների իրականացում և այդ կենտրոնների հիմնադրում և վերափոխում, որոնք կդառնան երիտասարդների համար համայնքային հարթակներ՝ կրթվելու, ինքնակատարելագործվելու, գեներացնելու և իրագործելու նորարարական գաղափարներ և ծրագրեր:

8. Քաղաքապետին կից երիտասարդական նոր խորհրդի ձևավորում և խորհրդի գործունեությունը արդյունավետ կազմակերպելու համար աջակցություն:

9. Երևանի ենթակայության տակ գտնվող կրթական հաստատությունների և համայնքային ՀԿ-ների հետ համագործակցությամբ դասընթացների և սեմինարների կազմակերպում՝ քաղաքացիական կրթության, ժողովրդավարության, գենդերային հավասարության, երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության կանխարգելման, շրջակա միջավայրի հիմնախնդիրների, մշակութային և ստեղծարար ոլորտների զարգացման թեմաներով»:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 39 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 29, դեմ՝ 8, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

16. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N182-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյան:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N182-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգորի Երիցյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – «1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «2020 թվականի տեղական վճարի գծով արտոնություններ սահմանելու մասին» N182-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1) Երևանի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2020 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝

ա.երեխայի ծնողները, կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Երևան քաղաքում,

բ. երեխայի ծնողը ազատամարտիկ է և (կամ) զոհված ազատամարտիկի ընտանիքի անդամ է,

գ. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր ժամկետային, պայմանագրային և այլ զորքերում պայմանագրային զինծառայող է,

դ. զոհված զինծառայողի երեխա է,

ե. միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխա է,

զ. սիրիահայի երեխա է,

է. 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող ծնողի երեխա է,

ը. հաշմանդամություն ունեցող երեխա է,

թ.երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը ներքին տեղահանված անձ է,

ժ. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը ունի փախստականի կարգավիճակ:

ժա. երեխայի ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը ունի ՀՀ-ում ապաստան հայցողի կարգավիճակ»:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 41 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝37, դեմ՝1, ձեռնպահ՝3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

17. **ԼՍԵՑԻՆ** - 2020 թվականի տեղական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «2020 թվականի տեղական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Լուսինե Գևորգյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Մարկոս Հարությունյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
3. Նուարդ Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը և Երևանի քաղաքապետի տեղակալ Հ. Սարգսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** – 1.Երևանի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի

կազմակերպման և իրացման թույլտվության համար սահմանել արտոնություն՝ ազատելով 2020 թվականի երկրորդ եռամսյակի համար հաշվարկված տեղական տուրքի վճարումից, բացառությամբ այն տնտեսվարող սուբյեկտների, ովքեր հանրային սննդի իրացումը կամ սպառումը կազմակերպել են գործունեության իրականացման վայրից դուրս՝ առաքման եղանակով:

2.Երևանի վարչական տարածքում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից՝ մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար 2020 թվականի երկրորդ եռամսյակի տեղական տուրքի գումարը վճարված լինելու պարագայում՝ տնտեսվարող սուբյեկտի դիմումի հիման վրա, վճարված գումարը կարող է հաշվանցվել որպես 2020 թվականի երրորդ և /կամ/ չորրորդ եռամսյակի տեղական տուրք կամ ուղղվել Երևան համայնքի բյուջեի նկատմամբ ունեցած այլ պարտավորությունների մարմանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ –** ավագանու 39 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ –** կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

18. **ԼՍԵՑԻՆ -** Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ –** Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ -** Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ -** Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ –** 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշման N 1 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «1. Վարչություններ» գլուխը լրացնել նոր 14.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ.

«14.1) երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն».

2) ուժը կորցրած ճանաչել որոշման N 1 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «1. Վարչություններ» գլխի 14-րդ կետը և «3. Բաժիններ» գլխի 3-րդ կետը.

3) Որոշման N 2 հավելվածում՝

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Սոցիալական ապահովության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություն** | | | | |
| 1 | վարչության պետ | 1 | 346000 | | 346000 |
| 2 | գործավար | 1 | 164000 | | 164000 |
| - | **Երեխաների պաշտպանության բաժին** | | | | |
| 1 | բաժնի պետ | 1 | 291000 | | 291000 |
| 2 | գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող | 1 | 225000 | | 225000 |
| 3 | գլխավոր մասնագետ - իրավաբան | 1 | 225000 | | 225000 |
| 4 | գլխավոր մասնագետ - հոգեբան | 1 | 225000 | | 225000 |
| 5 | առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող | 1 | 219000 | | 219000 |
| 6 | առաջատար մասնագետ | 1 | 219000 | | 219000 |
| 7 | առաջին կարգի մասնագետ | 1 | 207000 | | 207000 |
| - | **Սոցիալական պաշտպանության բաժին** | | | | |
| 1 | բաժնի պետ | 1 | 291000 | | 291000 |
| 2 | գլխավոր մասնագետ - սոցիալական աշխատող | 1 | 225000 | | 225000 |
| 3 | գլխավոր մասնագետ - իրավաբան | 1 | 225000 | | 225000 |
| 4 | գլխավոր մասնագետ - հոգեբան | 1 | 225000 | | 225000 |
| 5 | առաջատար մասնագետ - սոցիալական աշխատող | 1 | 219000 | | 219000 |
| 6 | առաջատար մասնագետ | 1 | 219000 | | 219000 |
| 7 | առաջին կարգի մասնագետ | 1 | 207000 | | 207000 |
| | | | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 16 | | | 3732000 |

բ. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին» զլուխը.

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «593.5» և «141421550» թվերը փոխարինել համապատասխանաբար «594.5» և «141516550» թվերով.

դ. «Ամբողջը» տողում «2132.5» և «463632350» թվերը փոխարինել համապատասխանաբար «2133.5» և «463727350» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

19. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N186-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի մասին» N186-Ն որոշման NN3,6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-3 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 38 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

20. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2019 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Դավիթ Խաչատրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2019 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2019 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ որոշվեց Երևանի ավագանու 5-րդ նստաշրջանի 1-ին նիստը գումարել 2020 թվականի սեպտեմբերի 8-ին, ժամը 11.00-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ (աղագրությունը կցվում է):

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Ղուկասյան